ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Կանանց հարցերով խորհրդի նիստ

30.04.2026թ.

Նիստին մասնակցեցին՝

Կազմակերպություն /գերատեսչություն	Անուն, ազգանուն	Պաշտոն
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տաթևիկ Ստեփանյան	Նախարարի տեղակալ (Նիստը վարող)
Ազգային ժողով	Զարուհի Բաթոյան	Պատգամավոր
Արդարադատության նախարարություն	Աննա Կարապետյան	Նախարարի տեղակալ
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Արաքսիա Սվաջյան	Նախարարի տեղակալ
Էկոնոմիկայի նախարարություն	Լիլիա Սիրականյան	Նախարարի տեղակալ
Ներքին գործերի նախարարություն	Գեորգի Խաչատրյան	Ոստիկանության Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության պետ

Արտաքին գործերի նախարարություն	Կարինե Սուջայան	Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության պետ
Առողջապահության նախարարություն	Նունե Փաշայան	Մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Արտյոմ Մեսրոպյան	Թվայնացման վարչության պետ
Երևանի քաղաքապետարան	Գևորգ Ղարիբյան	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Արմինե Ալավերդյան	Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ
Վարչապետի աշխատակազմ	Քրիստինե Հակոբյան	Սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Նախագահի աշխատակազմ	Լուսինե Մելքոնյան	Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Անի Թաթոյան	Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի ավագ մասնագետ
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Լիլիթ Միլիտոնյան	Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի մասնագետ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարիել Դանելյան	Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի փորձագետ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Անժելա Փիլոյան	Տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հրավիրյալ)
Պաշտպանության նախարարություն	Լուսինե Անտոնյան	Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի գլխավոր խորհրդատու
Շրջակա միջավայրի նախարարություն	Նոնա Բուդոյան	Կլիմայական քաղաքականության վարչության պետ
Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	Լիլիթ Վարագյան	Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ղեկավարի տեղակալ
Վիճակագրական կոմիտե	Վարդան Արևշատյան	ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	Լիլիա Սիմոնյան	ՀՌՀ ղեկավարի օգնական
Ազգային ժողով	Օլյա Շահինյան	Պատգամավորի օգնական (հրավիրյալ)
«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ	Տաթևիկ Աղաբեկյան	ՀԿ նախագահ

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ	Աննա Հովհաննիսյան	Շահերի պաշտպանության թիմի ղեկավար
«Օքսիջեն» ՀԿ	Մարգարիտա Հակոբյան	Գործադիր տնօրեն
«Ագաթ» ՀԿ	Կարինե Գրիգորյան	ՀԿ նախագահ
Եվրոպայի խորհուրդ	Լիանա Ամիրբեկյան	Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում ծրագրի ավագ պատասխանատու
Եվրոպայի խորհուրդ	Էլեոնորա Մանուչարյան	«Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի ղեկավար/պատասխանատու

ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի կողմից ստացված հանձնարարականի համաձայն՝ սույն թվականի ապրիլի 30-ին կայացած Կանանց հարցերով խորհրդի նիստը վարեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ տիկին Տաթևիկ Ստեփանյանը:

Նիստի օրակարգում ներառված էր երկու հարց՝

- ✓ ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի կատարման 2025 թվականի տարեկան զեկույցի ներկայացում,
- ✓ ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028թթ. ռազմավարությամբ 2026 թվականի համար նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի ներկայացում:

Նիստի առաջին մասում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2026թթ. Ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) և միջոցառումների ծրագրի կատարման 2025 թվականի տարեկան զեկույցը (այսուհետ՝ Զեկույց): Նախարարի տեղակալը մանրամասնորեն ներկայացրեց պետական մարմինների, միջազգային և տեղական գործընկեր կառույցների կողմից իրականացված աշխատանքների արդյունքները՝ ըստ Գենդերային ռազմավարության 6 գերակայությունների:

Ելույթի սկզբում նախարարի տեղակալը անդարդարձավ Զեկույցի մշակման մեթոդաբանությանը՝ նշելով, որ փաստաթուղթը մշակվել է որակական, քանակական և վերլուծական մեթոդների համադրմամբ, միջոցառումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկությունները վերլուծվել են՝ ըստ ակնկալվող արդյունքի և նախատեսված արդյունքային ցուցանիշների: Յուրաքանչյուր միջոցառման կատարման վերաբերյալ ներկայացվել են առաջարկներ 2026 թվականի համար:

Նախարարի տեղակալը ներկայացրեց Ռազմավարության առաջին գերակայությամբ ՝ «Կառավարման բոլոր ոլորտներում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային խտրականության հաղթահարում. կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար ու լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովում և ընդլայնում», 2025 թվականի համար նախատեսված 7 միջոցառումները՝

⇒ Հիմք ընդունելով մարզային գենդերային խնդիրները՝ մարզպետներին և Երևանի քաղաքապետին կից գենդերային հարցերով հանձնաժողովների տարեկան պլանների կազմում և նիստերի կանոնավոր եւ շարունակական գործունեության անցկացում»,

⇒ «Ռազմավարական փաստաթղթերում գենդերային ազդեցության գնահատման (մեյնսթրմինգի) մեթոդաբանության մշակում և ներդրում»,

⇒ «Հանրային ծառայողների համար գենդերային հավասարության և գենդերազգայնության վերաբերյալ վերապատրաստումների մոդուլի մշակում և ներդրում»,

⇒ «Հանրային ծառայողների համար գենդերային հավասարության, գենդերազգայնության և կանանց իրավունքների վերաբերյալ համակարգված ուսուցման կազմակերպում՝ կանոնավորված, պարտադիր և շարունակական վերապատրաստման դասընթացների միջոցով»,

⇒ «Լրատվամիջոցների հետ համագործակցությամբ հանրային իրազեկվածության բարձրացում՝ քաղաքական և հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց (այդ թվում՝ խոցելի խմբերի) լիարժեք և ներառական մասնակցության կարևորության վերաբերյալ»,

⇒ «Կնոջ դերն ու նշանակությունը բարձրացնելու նպատակով մեդիա հարթակներում լուսաբանել և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կայացման գործում մասնագիտական զգալի ներդրում ունեցած կանանց»,

⇒ «Քաղաքացիական ծառայողների համար ընդհանրական կոմպետենցիաների մշակում և ներդնում, մասնավորապես ընդգծելով և ներառելով գենդերազգայուն և ներառական բաղադրիչը»:

Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց մարզերում մարզպետին կից Գենդերային հանձնաժողովների ձևավորման գործընթացի արդյունքները՝ նշելով, որ ներկայում ՀՀ 10 մարզերից 9-ում ձևավորված են Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ, որոնք տարեկան նիստեր գումարելուց զատ, տեսանելի աշխատանքներ են իրականացրել նաև աշխատանքային պլաններ մշակելու և հաստատելու ուղղությամբ: Տաթևիկ Ստեփանյանը հավելեց, որ Գենդերային հանձնաժողովներ դեռևս չեն ձևավորվել Շիրակի մարզում և Երևան քաղաքում:

Խոսելով գենդերային հավասարության, կանանց իրավունքների, գենդերազգայուն մոտեցումների և հարակից այլ թեմաների վերաբերյալ հանրային ծառայողների վերապատրաստումների մասին՝ Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց ինչպես Քաղաքացիական ծառայության գրասենյակի, այնպես էլ պետական մյուս մարմինների և միջազգային գործընկերների կողմից իրականացված աշխատանքները, ներկայացնելով, որ

- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի և Քաղաքացիական ծառայության համագործակցության շրջանակում մշակվել և հանրայնացվել են գենդերազգայունության վերաբերյալ «Սեռազգայուն հաղորդակցություն», «Սեռազգայուն մշտադիտարկում» թեմաներով վերապատրաստման մոդուլները նախատեսված առցանց ուսուցման համար,

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի համագործակցությամբ «HELP» թվային հարթակում մշակվել և ներդրվել է «Գենդերային հավասարություն և գենդերային ինտեգրում» թեմայով առցանց դասընթացը,
-
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԵՄ-Ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան» ծրագրի համագործակցության շրջանակում «Գենդերային հավասարություն, գենդերազգայնություն և կանանց իրավունքներ» թեմայով վերապատրաստման մոդուլը գտնվում է վերջնականացման փուլում և կներկայացվի շահագրգիռ մարմինների քննարկմանը, որից հետո կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ հանրային ծառայողների, ինչպես նաև այլ պատասխանատու մարմինների համապատասխան մասնագետների համար:

Տաթևիկ Ստեփանյանը նշեց, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ մեկնարկել է սոցիալական հոլովակների նոր շարք, որի շրջանակում հանրության են ներկայացվում կանայք, ովքեր պատմում են ընտանիքի և աշխատանքի հավասարակշռման, բիզնեսի և երեխաների խնամքի համատեղման, հանրային գործունեության և հասարակության մեջ կնոջ վերաբերյալ արմատացած կարծարտիպերի հաղթահարման իրենց փորձի մասին:

Քաղաքացիական ծառայողների համար ընդհանրական կոմպետենցիաների մշակման և ներդրման ուղղությամբ աշխատանքներ ևս իրականացվել են՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ կատարել է քաղաքացիական ծառայողների համար նախատեսված ընդհանրական կոմպետենցիաների լրամշակում՝ դրանց մեջ զետեղվել են գենդերազգայուն և ներառական բաղադրիչներ:

Ռազմավարության առաջին գերակայության շրջանակում իրականացված աշխատանքների ամփոփ ներկայացումից հետո Տաթևիկ Ստեփանյանը անդրադարձավ Ռազմավարության 2-րդ գերակայությանը «Սոցիալ-տնտեսական բնագավառում՝ աշխատաշուկայում, տնտեսության տարբեր ճյուղերում, աշխատանքային գործունեության մեջ գենդերազգայուն մոտեցումների խրախուսում, աշխատուժի գենդերային խզվածքի նվազում և աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավում»: Այս գերակայության շրջանակում 2025 թվականի համար նախատեսված է եղել 3 միջոցառում՝

⇒ «Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների շարունակական բարելավում (կառուցում, հիմնում, վերանորոգում)»

⇒ «Հայրության արձակուրդի մասին իրազեկման միջոցառումների, հանրային արշավների իրականացում»

⇒ «ՓՄՁ-ների համար տեղեկատվական և առցանց ուսուցման միասնական հարթակի ստեղծում՝ հատուկ ուշադրությամբ կանանց ձեռնարկատիրական գործունեության տեղեկատվական աջակցության հասանելիության և արդյունավետության բարձրացմանը»:

Տաթևիկ Ստեփանյանն անդրադարձավ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N 1581-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող մանկապարտեզ և նախակրթարան» ծրագրին, նշելով, որ հաստատված 475 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել/վերանորոգվել է 275-ը՝ 171 մանկապարտեզ և 104 նախակրթարան: Այս համատեքստում նախարարի տեղակալը խոսեց նաև հայրության արձակուրդի ինստիտուտի զարգացման մասին՝ կարևորելով «ՕքսԵՋԵն» հիմնադրամի կողմից ներկայացված «Ազատագրված տղամարդիկ» 6 մասից բաղկացած ֆիլմաշարը՝ ուղղված ընտանիքում հայրերի դերի

կարևորությանը, հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերի ու տարընկալումների վերացմանը, ընտանիքում և երեխայի խնամքի գործընթացում կանանց և տղամարդկանց լիարժեք ու հավասար մասնակցությանը:

Տաթևիկ Ստեփանյանն անդրադարձավ նաև կանանց ձեռնարկատիրական կարողությունների խթանմանն ու այս ոլորտում կանանց մասնակցության մեծացմանն ուղղված աշխատանքներին: Նախարարի տեղակալը ներկայացրեց Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Հայաստանի ՓՄՁ մրցունակության 2026–2030 թվականների ռազմավարական ծրագրի» նախագիծը՝ շեշտադրելով ռազմավարական ծրագրի առանցքային ուղղությունները՝

- կանանց ձեռնարկատիրական գործունեության խթանում և տնտեսական ներառականության բարձրացում,

- ոչ խտրական և թիրախային ֆինանսական գործիքների կիրառմամբ ֆինանսական հասանելիության ընդլայնում,

- ձեռնարկատիրական կարողությունների, ֆինանսական և թվային գրագիտության զարգացում,

- մարզաբնակ և կլիմայական ռիսկերի նկատմամբ առավել խոցելի խմբերին պատկանող կին ձեռներեցների համար թիրախային աջակցություն,

- թվային հարթակների զարգացման և կիրառման միջոցով պետական աջակցության ծրագրերի և ծառայությունների մատչելիության ապահովում:

Խոսելով Ռազմավարության 3-րդ գերակայության՝ «Կրթության և գիտության ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանում ու հավասար հնարավորությունների ընդլայնում», մասին՝ Տաթևիկ Ստեփանյանը նշեց, որ 2025 թվականի ընթացքում այս գերակայությամբ սահմանված միջոցառումների շրջանակում լայնածավալ աշխատանքներ են իրականացվել, որոնք հիմնականում ուղղված են եղել ուսուցիչների, աշակերտների և ուսանողների կարողությունների ու գիտելիքների զարգացմանը:

2025 թվականի համար նախատեսված է եղել 9 միջոցառում՝

⇒ «Հանրակրթական ուսումնամեթոդական նյութերի և ծրագրերի, այդ թվում՝ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակման, գնահատման և երաշխավորման գործընթացներում գենդերազգայուն չափանիշների շարունակական վերանայում (ըստ անհրաժեշտության)»

⇒ «Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերանայման արդյունքում՝ գենդերային հավասարության վերաբերյալ նյութերի շարունակական վերանայում (ըստ անհրաժեշտության)»

⇒ «Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի վերանայման արդյունքում՝ «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակում առողջ ապրելակերպի (մարդու և կանանց իրավունքների, գենդերային հավասարության, գենդերային բռնության, վերարտադրողական առողջութան և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ռիսկերի և բացասական հետևանքների) թեմաների ուսուցում»

⇒ «Նախադպրոցական, հանրակրթական, նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների (համաձայնությամբ) վարչական և մանկավարժական աշխատակազմի/ դասավանդողների շրջանում գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ համապարփակ վերապատրաստումների շարունակական կազմակերպում»

⇒ «Բուհերում գործող ընթացակարգերի բարելավում՝ սովորողների շրջանում գենդերային բռնության, ներառյալ՝ սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման և դրանց վերաբերյալ իրազեկման նպատակով»

⇒ «Կանանց և տղամարդկանց համար սեռով /ոչ ավանդական/ մասնագիտություններ զբաղմունքներում հավասար ներգրավվածություն ապահովելու նպատակով հատուկ թիրախային միջոցառումների իրականացում»

⇒ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և հաշվառման համակարգի գործարկում»

⇒ «Գիտական հետազոտություններում կանանց մասնակցությունն ընդլայնող միջոցառումների իրականցում»

⇒ « Նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններում գենդերային գիտելիքների ուսուցանում»:

Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց տարբեր ուղղություններով և տարբեր թիրախ խմբերի համար իրականացված վերապատրաստման և իրազեկման միջոցառումները՝

- իրականացվել են հեռավար ձևաչափով վերապատրաստումներ «Գենդեր արձագանքող ուսուցումը դպրոցում» թեմայով՝ 4394 ուսուցչի մասնակցությամբ, մշակվել է «Ապատեղեկատվության դեմ պայքար. ինքնության հիմքով ձևավորված կարծրատիպեր» վերտառությամբ ձեռնարկը, որի հիման վրա կազմակերպվել են հեռավար դասընթացներ 54 խմբի համար՝ 1114 ուսուցչի մասնակցությամբ, դասընթացները միտված են եղել կրթական համակարգում քննադատական և վերլուծական մտածողության, մեդիագրագիտության և թվային անվտանգության խրախուսմանն ու կեղծ և մտաշահարկող (մանիպուլատիվ) տեղեկատվության տարբերակմանը,

- միջին մասնագիտական կրթության ոլորտում վերապատրաստվել է 900 մասնագետ,

- բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվել են իրազեկման և վերապատրաստման շարունակական միջոցառումներ թե՛ ուսանողների, թե՛ պրոֆեսորադասախոսական կազմի համար:

2025 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացված աշխատանքները հիմնականում առնչվել են բուհերում գործող ընթացակարգերի բարելավմանը՝ սովորողների շրջանում գենդերային բռնության, սեռական ոտնձգությունների, գենդերազգայուն մոտեցումների վերաբերյալ կարողությունների զարգացման միջոցառումների իրականացումից զատ մշակվել են ներքին կարգապահական կանոններ, հաստատվել են էթիկայի կանոնագրքեր:

Շարունակական աշխատանքներ են իրականացվել նաև կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և կրթության համակարգ ներառման ուղղությամբ՝ 2025 թվականի մայիս ամսվա դրությամբ՝ կրթության համակարգում ընդգրկվել է շուրջ 7308 սովորող, որից՝ 3329-ը կրթության մեջ երբևէ չներառված երեխաներ են:

Հաջորդիվ Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց Ռազմավարության 4-րդ՝ «Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովում» գերակայությունը, որի շրջանակում 2025 թվականին նախատեսված է եղել 8 միջոցառում՝

⇒ «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ներդրվող առողջության համապարփակ ապահովագրության համակարգում գենդերազգայուն չափանիշների կիրառում»

⇒ «Հղիության արհեստական ընդհատման դեղորայքային եղանակի հասանելիության ապահովում առողջապահական ոչ ստացիոնար հաստատություններում՝ օրենսդրական փոփոխությունների և գործառնական ընթացակարգերի ներդրման և իրազեկման միջոցով»

⇒ «Սեռական բռնության ենթարկված կանանց վարման՝ ներառյալ զոհակենտրոն մոտեցման վերաբերյալ, կլինիկական ուղեցույցի մշակում»

⇒ «Հետծննդյան շրջանում կանանց հետծննդաբերական դեպրեսիաների բացահայտման մեխանիզմների ներդնում»

⇒ «Առողջապահական հաստատությունների աշխատակիցների համար գենդերազգայունության բարձրացմանն ուղղված շարունակական վերապատրաստումների իրականացում՝ աշխատակիցների մոտ գենդերազգայուն և իրավունքահեն մոտեցումների զարգացման նպատակով»

⇒ «Վերարտադրողական առողջության ոլորտում գենդերային հավասարությունը խթանելու նպատակով միջոցառումների իրականացում է ներառելով տղամարդկանց, ճանաչելով նրանց դերը, պատասխանատվությունը ծննդաբերության և երեխայի խնամքին մասնակից ու աջակից լինելու համատեքստում»

⇒ «Առողջապահական կանխարգելիչ միջոցառումների սքրինինգային բծառայությունների իրականացում հավասար հիմքունքներով՝ ազատությունից զրկված անձանց շրջանում»

⇒ «Բուժաշխատողների համար ՄԻԱՎ-ի թեմայով դասընթացների շարունակականության իրականացում ՄԻԱՎ-ով ապրող կանանց նկատմամբ խտրականության նվազման նպատակով»:

Վերոնշյալ միջոցառումների շրջանակում կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել մասնագիտական նյութերի մշակմանն ու հաստատմանը, ինչպես նաև բուժաշխատողների շարունակական վերապատրաստումների իրականացմանը: Մշակվել և Առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել են «Դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատման դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույցը», «Սեռական բռնության ենթարկված կանանց բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման սկզբունքները ուղեցույցը» և «Հետծննդյան դեպրեսիայի հայտնաբերման և ուղղորդման ուղեցույցը» ներառել հետբուհական կրթական ծրագրերի մեջ: Այս ուղեցույցները փոխանցվել են նաև Առողջապահության ազգային ինստիտուտին հետբուհական կրթական ծրագրերում ներառելու նպատակով:

2025 թվականին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ՝ ծննդաբերության, երեխայի խնամքի ու ծնողավարության մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացման կարևորության վերաբերյալ իրականացվել են նաև դասընթացներ «Հայրերի դպրոց» ծրագրի շրջանակում Արագածոտնի, Շիրակի, Տավուշի, Լոռու մարզերում և Երևանում: Միջոցառումներին մասնակցել է 100 տղամարդ:

Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց նաև 2025 թվականին ազատությունից զրկված կանանց շրջանում առողջապահական կանխարգելից միջոցառումների՝ սքրինինգային հետազոտությունների իրականացման տվյալները: Նախարարի տեղակալը նշեց նաև, որ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» N 825-Ն որոշման մեջ նախատեսվում են փոփոխություններ, որի նպատակը ազատությունից զրկված կանանց շրջանում սքրինինգային ծառայությունների հավասար հիմունքներով և բարձր արդյունավետությամբ իրականացնելու հիմքերի ապահովումն է:

Ռազմավարության 5-րդ գերակայությամբ՝ «Գենդերային բռնության և խտրականության կանխարգելում ու հաղթահարում, ընտանեկան բռնության ենթարկված

անձանց պաշտպանություն և աջակցություն», 2025 թվականին նախատեսված է եղել 10 միջոցառում՝

⇒ «Իրականացնել «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ՝ թիրախավորելով կոնվենցիայի վերաբերյալ առկա տարընկալումներն ու ապատեղեկատվությունը»

⇒ «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման էլեկտրոնային շտեմարանի անխափան գործունեության ապահովում և համապարփակ վիճակագրության վարում»

⇒ «Ընտանեկան և կենցաղային բռնության բարդ դեպքերի օպերատիվ արձագանքման նպատակով աշխատանքային մասնագիտական խմբի ստեղծում և գործունեության ապահովում»

⇒ «Պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող կառուցների մասնագետների, մասնավորապես սոցիալական աշխատողների և ոստիկանների կարողությունների զարգացման նպատակով ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, պաշտպանության և աջակցության տրամադրման և հարակից այլ թեմաների շրջանակում շարունակական վերապատրաստումների իրականացում՝ հաստատված մոդուլների հիման վրա»

⇒ «ԱՀԿ ուղեցույցների հիման վրա վերապատրաստման դասընթացների եւ ուսումնական ձեռնարկի մշակում՝ առողջապահական ծառայություններ մատուցողների համար, որը կօգտագործվի վերջիններիս պարտադիր վերապատրաստումների ընթացքում»

⇒ «Ուսուցիչների վերապատրաստումների ծրագրում և չափորոշչում գենդերային բաղադրիչի շրջանակում վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում նաև ընտանեկան և կենցաղային բռնության, գենդերային բռնության կանխարգելման թեմաների ներառմամբ»

⇒ «Հանրակրթական դպրոցներում աշակերտների շրջանում ընտանեկան և կենցաղային բռնության թեմաներով իրազեկման արշավների իրականացում»

⇒ «Քննիչների, դատավորների եւ դատախազների համար ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ պարտադիր, համալիր, շարունակական եւ զարգացող վերապատրաստումների իրականացում»

⇒ «Քրեակատարողական եւ պրոբացիայի ծառայողների կարողությունների զարգացում՝ ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ եւ ընտանեկան և կենցաղային բռնության թեմաների ներառում նրանց վերապատրաստման ծրագրերում»

⇒ «911 ծառայությունը սպասարկող անձնակազմի վերապատրաստում՝ ընտանեկան և կենցաղային բռնության թեմայի վերաբերյալ»:

Ամփոփելով վերոնշյալ բոլոր միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքները՝ Տաթևիկ Ստեփանյանն իր ելույթում առանձնացրեց մի քանի կարևոր կետեր՝

- 2025 թվականի ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով վերապատրաստումները նախատեսված են եղել մասնակիցների լայն շրջանակի համար՝ այս թվում ներառվել են ոստիկաններ, քննիչներ, դատախազներ, քրեակատարողական և պռոբացիայի ծառայողներ, սոցիալական աշխատողներ, առողջապահության և կրթության ոլորտների, քաղհասարակության ներկայացուցիչներ,

- իրականացվել են իրազեկման շարունակական միջոցառումներ ազգային, մարզային և համայնքային մակարդակներում՝ այս համատեքստում հատկապես լայնածավալ աշխատանքներ են կատարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատվիրակված ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնի ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների կողմից,

- ամբողջական գործարկման է անցել Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման համակարգը, իրականացվել են համակարգի գործառնական բարելավման աշխատանքներ, 2025 թվականին համակարգ է

մուտքագրվել 2905 թերթիկ, համակարգում գրանցվել է 282 օգտահաշիվ, որից 205-ը եղել են ակտիվ օգտահաշիվներ:

Հաջորդիվ Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց Ռազմավարության 6-րդ գերակայությունը՝ «Կլիմայի փոփոխության նկատմամբ գենդերազգայուն և գենդեր-արձագանքող մոտեցումների ձևավորում, ներառական սկզբունքների ապահովում և իրազեկվածության բարձրացում», որի շրջանակում 2025 թվականի համար նախատեսված է եղել 6 միջոցառում՝

⇒ «Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած գենդերային խնդիրների թեմատիկ ուսումնասիրությունների իրականացում դրա ազդեցությունը առավելապես կրող ոլորտներում, կլիմայի փոփոխությանն առնչվող գենդերային ցուցանիշների սահմանում, դրանց հավաքագրման մեթոդաբանության մշակում և տվյալների ամփոփում»

⇒ «Կլիմայի փոփոխությանն առնչվող գենդերային ցուցանիշների սահմանում, դրանց հավաքագրման մեթոդաբանության մշակում և տվյալների ամփոփում»

⇒ «Կլիմայի փոփոխության, այդ թվում՝ գենդերային և սոցիալական ազդեցության վերաբերյալ թեմատիկ (այդ թվում՝ ըստ տնտեսության ոլորտների) դասընթացների նյութերի պատրաստում և ներառում հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերում»

⇒ «Էներգախնայողության եւ այլընտրանքային էներգիայի ոլորտներում մասնագիտական (այդ թվում՝վերապատրաստման) ծրագրերին եւ աշխատանքներում կանանց մասնակցության խրախուսում և ընդգրկում»

⇒ «Կլիմայի փոփոխությանն առնչվող ոլորտներում, մեղմման և հարմարվողականության ծրագրերում միջգերատեսչական հանձնաժողովներում, մարզային և համայնքային մակարդակներում կանանց մասնակցության խրախուսում, ինչպես նաև կլիմայի փոփոխության գենդերային և սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ սոցիալական գովազդների մշակում և հանրայնացում»

⇒ «Հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցության և գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում»:

Տաթևիկ Ստեփանյանը նշեց, որ Շրջակա միջավայրի նախարարությունը գործընկեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ պարբերաբար իրականացվում է հետազոտություններ և ուսումնասիրություններ՝ կլիմայի փոփոխության ազդեցության գենդերային վերլուծության և բնակչության տարբեր խմբերի, այդ թվում կանանց վրա դրա ազդեցության գնահատման վերաբերյալ: 2025 թվականին մշակվել և հանրայնացվել է նաև Թափանցիկության երկամյա զեկույցներում և ազգային հաղորդագրություններում գենդերային պահանջների ապահովման ուղեցույցը Կատարվել է ուսումնասիրություն Հայաստանում կլիմայի փոփոխության հետ կապված գենդերային և սոցիալական խոցելիության վերաբերյալ, որը ներկայացվել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպայի վիճակագիրների համաժողովում: Վերլուծվել են 2024 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքում հավաքագրված որակական և քանակական տվյալները, բացահայտվել են Ծրագրի շահառուների սոցիալական խոցելիության կարգավիճակը, էներգաարդյունավետության վերազինման տնտեսական և սոցիալական ազդեցությունը կանանց և տղամարդկանց գլխավորությամբ տնային տնտեսությունների վրա, ինչպես նաև սոցիալապես գնահատվել են անապահով ընտանիքները:

Ամփոփելով Տաթևիկ Ստեփանյանը նշեց, որ 2025 թվականի համար նախատեսված 43 միջոցառումներից 37-ը կատարվել են, 4-ը՝ մասամբ կատարվել, իսկ 2 միջոցառում չեն կատարվել: Ռազմավարության կատարողականը գնահատվել է 86 տոկոս:

Զեկույցի ներկայացումից հետո Նիստի մասնակիցները հանդես եկան հարցադրումներով:

Ազգային ժողովի պատգամավոր տիկին Զարուհի Բաթոյանը դրական գնահատեց Ռազմավարության շրջանակում կատարված աշխատանքները՝ հնչեցնելով հետևյալ հարցերը՝

- որո՞նք են Ռազմավարության չկատարված միջոցառումները,
- ինչպե՞ս են իրականացվել կամ իրականացվելու քաղաքացիական, հանրային ծառայողների վերապատրաստումները,

- ի՞նչ մեխանիզմով են իրականացվում վերապատրաստումները Արդարադատության ակադեմիայում,

- ու՞մ համար են նախատեսված Առողջապահության նախարարության կողմից մշակված և հաստատված ուղեցույցները՝ արդյո՞ք դրանք հասանելի են բոլորին, թե նախատեսված են միայն մասնագետների համար:

Ի պատասխան՝ նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը նշեց, որ չկատարված երկու միջոցառումները ներառված են Ռազմավարության 5-րդ և 6-րդ գերակայություններում՝ «911 ծառայությունը սպասարկող անձնակազմի վերապատրաստում՝ ընտանեկան և կենցաղային բռնության թեմայի վերաբերյալ» և «Հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցության և գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում»: Անդրադառնալով քաղաքացիական, հանրային ծառայողների վերապատրաստումներին՝ Տաթևիկ Ստեփանյանը տեղեկացրեց, որ վերապատրաստումները կրում են շարունակական բնույթ, դրանք իրականացվում են թե՛ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից արդեն իսկ մշակված և հանրայնացված նյութերի, թե՛ նոր մշակվող ուսումնական ձեռնարկների և մոդուլների հիման վրա՝ տեղական և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցությամբ: Արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանը նշեց, որ Արդարադատության ակադեմիայում վերապատրաստումներն իրականացվում են ինչպես տարեկան հաստատված պլանների համաձայն, այնպես էլ «ad hoc» սկզբունքով՝ համագործակցելով նաև տարբեր գործընկերների հետ: Առողջապահության նախարարության Մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ Նունե Փաշայանը նշեց, որ Առողջապահության նախարարի կողմից հաստատված ուղեցույցները («Դեղորայքային եղանակով հղիության արհեստական

ընդհատման դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույցը», «Սեռական բռնության ենթարկված կանանց բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման սկզբունքները ուղեցույցը» և «Հետծննդյան դեպրեսիայի հայտնաբերման և ուղղորդման ուղեցույցը») Առողջապահության նախարարի կողմից հաստված ուղեցույցները նախատեսված են բուժաշխատողների համար:

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի նախագահ Տաթևիկ Աղաբաբյանը հետաքրքրվեց, թե ինչ աշխատանքներ են իրականացվում դպրոցներում երեխաների հետ սեռական կրթության, սեռական բռնության կանխարգելման թեմաներով: Հարցին պատասխանեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը՝ անդրադառնալով հանրակրթության նոր չափորոշչի կիրարկման շրջանակում իրականացված աշխատանքներին, այս թվում նաև 5-ից 11-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացի ներդրմանը: Նախարարի տեղակալը նշեց, որ թե՛ աշակերտների, թե՛ ուսուցչական կազմի համար պարբերաբար իրականացվում են իրազեկման, կարողությունների զարգացման միջոցառումներ, այնուամենայնիվ, բացահայտված դեպքերը վկայում են, որ այս ուղղությամբ դեռևս մեծածավալ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն կա:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի շահերի պաշտպանության թիմի ղեկավար Աննա Հովհաննիսյանը հայտնեց, որ Ռազմավարության կատարման տարեկան զեկույցի շրջանակում պարբերաբար անդրադարձ է կատարվում միջազգային կազմակերպություններին և նրանց կողմից կատարված աշխատանքներին, սակայն կարևոր կլիներ ներկայացնել նաև ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների կողմից ձեռնարկված միջոցառումները: Նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը տեղեկացրեց, որ Ռազմավարության կատարման զեկույցում ներկայացված են նաև հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկությունները, որոնք ուղղակիորեն առնչվել են Ռազմավարությամբ սահմանված որևէ միջոցառման կատարմանը և ներկայացվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Զեկույցում ներառելու նպատակով:

Նիստի երկրորդ մասում հանդիպման մասնակիցները ներկայացրին 2026 թվականի համար սահմանած առաջնահերթությունները՝ անդրադառնալով ինչպես ընթացիկ, այնպես էլ առաջիկայում նախատեսվող աշխատանքներին:

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Լիլիա Սիրականյանը նշեց, որ կանանց ձեռնարկատիրական ակտիվության խթանումը ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական կարևորության հարց է, ուստի նախարարությունը շարունակելու է հանդես գալ անպիսի նախաձեռնություններով, որոնք ուղղված են կանանց ձեռնարկատիրական կարողությունների, ֆինանսական և թվային գրագիտության զարգացմանը, տնտեսական ներառմանը:

ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության պետ Գեորգի Խաչատրյանը նշեց, որ Ներքին գործերի նախարարության համար շարունակում են առաջնահերթ լինել համակարգում առավել մեծ թվով կանանց ներգրավումը և կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության դեմ պայքարը:

Երևանի քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Գևորգ Ղարիբյանը կարևորեց երեխաների նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության դեպքերում միջգերատեսչական ակտիվ համագործակցությունը և տեղեկատվության արդյունավետ ու ճշգրիտ փոխանցումը:

Վիճակագրության պետական խորհրդի անդամ Վարդան Արևշատյանը հայտնեց, որ իրականացվում են աշխատանքներ գենդերային տվյալների թվային վահանակի ներդրման ուղղությամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Արձանագրությունը կազմող՝ Արմինե Ալավերդյան